# «Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9–ի N 5-Ն հրամանում լրացում կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագիծ

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 5-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի ՆՀ-922-Ա հրամանագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշման N 1 հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետը`

***Հրամայում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանի N 23 հավելվածում «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով 1 05 049» տողից հետո լրացնել նոր տող` հետևյալ բովանդակությամբ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| « | ՀՀ բնապահպանության նախարարության անտառային պետական կոմիտե | | »: 1 | |

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: